

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

«Գյոււմրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

03.12.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 59 (հիսունինը) անդամից ներկա էին 47-ը (քառասունյոթ):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՄԻ-ի կազմակերպարարական կարգավիճակի փոփոխության խնդրի մասին:

Զեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

2. Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի ընտրություն:

Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի

նախագահ Ա. Ֆարմանյան

3. Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ ֆիզմաթ և տնտ. ֆակուլտետի

ղեկան Մ. Մարգարյան

4. Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ ֆիզ. դաստիարակության և

ՆԶՊ ֆակուլտետի ղեկան Ա. Խաչատրյան

5. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ՊԴ կազմի վարքագծով պայմանավորված գնահատման սանդղակի հաստատում:

Զեկ.՝ Գիտության և արտաքին կապերի

գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6. Ընթացիկ հարցեր:

6.1 ԳՊՄԻ-ի ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի անվանափոխման, կազմի փոփոխման և գործունեության կանոնակարգի քննարկում:

Ջեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.2 Ակադեմիական փոխանակման ծրագրերով առնվազն մեկ ամիս ժամկետով տեղաշարժվելու դեպքում ԳՊՄԻ-ի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների անդամակցումը կառավարման մարմիններում դադարեցնելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.3 ԳՊՄԻ-ի խորհրդին անդամակցելու համար ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուների ընտրության հարց:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

6.4 ԳՊՄԻ-ի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., դոցենտ Հ. Ս. Ջաքյանի «Հին հայերենի կրկնասեր քայերը. տարածամանակյա քննություն» խորագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին
կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՄԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի կազմակերպարարական կարգավիճակի փոփոխության խնդրի մասին (Ջեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

Ռեկտոր Վ. Գրիգորյանն իր ելույթում մասնավորապես նշեց, որ բուհերի համար ՊՈԱԿ-ի կարգավիճակը մի շարք բարդությունների

ու դժվարությունների տեղիք է տալիս՝ խոչընդոտելով բուհերի կազմակերպչական ու ֆինանսական ինքնավարության տարրերի իրականացմանը: Բուհերի կազմակերպահրավական կարգավիճակի փոփոխության մասին հարցը վաղուց է գտնվել ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստերի օրակարգում, և մյուս բուհերի հաջողված փորձը՝ հիմնադրամի կարգավիճակի անցնելով, հիմք է տվել, որպեսզի ԳՊՄԻ-ին ևս ձեռք բերի նշված կարգավիճակը: Վ. Գրիգորյանը կանգ առավ այն առավելությունների վրա, որն ընձեռում է հիմնադրամի կարգավիճակը. միջազգային համագործակցության զարգացում, ուսման որակի բարձրացում, կառավարման համակարգի հետագա կատարելագործում, ճկուն ձեռնարկատիրական գործունեության ծավալում, ֆինանսական մուտքերի բազմազանեցում, գնումների գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպում և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը, պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ե. Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով հիմնադրամի կարգավիճակ ունեցող բուհերի առավելությունները (միջազգային համագործակցության զարգացում, ուսման որակի բարձրացում, կառավարման համակարգի հետագա կատարելագործում, ճկուն ձեռնարկատիրական գործունեության ծավալում, ֆինանսական մուտքերի բազմազանեցում, գնումների գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպում և այլն)՝ դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ միջնորդելու ՀՀ կառավարությանը Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կազմակերպահրավական կարգավիճակը պետական ոչ առևտրային կազմակերպությունից հիմնադրամի անցնելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի ընտրություն (Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան):

Ա. Ֆարմանյանի հաղորդմամբ՝ կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Օֆելյա Էդմոնի Կուրազյանը: Նա մանրամասն ներկայացրեց Օ. Կուրազյանի կենսագրական այն տվյալները, որոնք պետք է համապատասխանեն ԳՊՄԻ-ի ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգի պահանջներին:

Այնուհետև Ա. Ֆարմանյանը խոսքը փոխանցեց Օ. Կուրազյանին:

Օ. Կուրազյանը նախ նշեց, որ հանգամանքների բերումով է վերջին երեք ամսին օգնել Լ. Աթանեսյանին՝ ամբիոնի աշխատանքները համակարգելու համար: Եվ այժմ նա իրագեկ է ինչպես ամբիոնի խնդիրներին, այնպես էլ դրանց լուծման օբյեկտիվ դժվարություններին:

Հասկանալով ամբիոնի յուրահատկությունը՝ տեսնում է մասնագիտական կրթական ծրագրերում, ԳՊՄԻ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգում մասնակի փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Բացի դրանից, նա կարևորեց աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացման անհրաժեշտությունը՝ գրաֆիկական դիզայն կամ համակարգչային դիզայն առարկաների ներառմամբ: Լինելով մոդելավորող՝ հավաստիացրեց, որ այսօր դիզայնի ոլորտի ցանկացած մասնագետ կարիք ունի համակարգչային գրաֆիկայի գիտելիքների: Օ. Կուրազյանը նաև կարևորեց ԳՊՄԻ-ի ապագա դիմորդների՝ հատկապես ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի աշակերտների հետ սիստեմատիկ աշխատանքների իրականացումը: Եվ

իրատեսական համարեց ԳՊՄԻ-ի ավագ դպրոցում արվեստի դպրոցի ստեղծումը՝ ելնելով նյութատեխնիկական բազայի, մարդկային ռեսուրսների առկայությունից:

Նա նաև բարձրաձայնեց ամբիոնի երիտասարդացման խնդիրը, որովհետև ներկայումս ամբիոնի աշխատակիցների միջին տարիքը վաթսունն է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, մանկավարժության ֆակուլտետի ղեկան Ռ. Մարդոյանը, արհեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյանը:

Ս. Ալեքսանյանը շնորհակալություն հայտնեց Լաուրա Աթանեսյանին՝ ամբիոնի վարիչի պաշտոնում ծավալած գործունեության համար և ցանկացավ նրան քաջառողջություն: Ինչ վերաբերում է ամբիոնի ղեկավարմանը, ապա, ըստ նրա՝ ամբիոնի վարիչին սպասվում է լարված աշխատանք՝ ելնելով մեկ վայրում տարբեր մասնագիտությունների համատեղման իրողությունից: Կարևորեց հատկապես ամբիոնի վարիչի բեռնվածությունը մասնագիտությունների հավատարմագրման գործընթացում: Բայց և այնպես, ծանոթ լինելով Օ. Կուրազյանի աշխատանքային որակներին, առաջարկեց թողնել նրա թեկնածությունը փակ գաղտնի քվեարկությանը:

Մանկավարժության ֆակուլտետի ղեկան Ռ. Մարդոյանը Օ. Կուրազյանի անձնային որակներից արժևորեց պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, ինչպես նաև լսելու կարողությունը: Նա հույս հայտնեց, որ ամբիոնում Լ. Աթանեսյանի շնորհիվ ստեղծված լավագույն ավանդույթները կպահպանվեն: Եվ նա ևս միացավ պարոն Ս. Ալեքսանյանի առաջարկին:

Արհեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյանը, ճանաչելով Օ. Կուրազյանին և՛ որպես իր ուսանող, և՛ որպես գործընկեր, հավաստիացրեց, որ ամբիոնի մարդկային կապիտալի

շնորհիվ նա կկարողանա պատշաճ մակարդակով կազմակերպել բոլոր աշխատանքները:

Ռեկտոր Վ. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Լ. Աթանեսյանին իր անաչառ աշխատանքի համար և ցանկացավ նրան առողջություն: Վ. Գրիգորյանը շեշտեց, որ ինչպես ամբիոնի աշխատակիցների, այնպես էլ ուսանողների հետ մարդկային, գործնական հարաբերությունների կառուցումը բարդ է: Նա հավելեց, որ առաջիկա օրերին մանկավարժության ֆակուլտետի դեկանի հետ մեկտեղ կայցելի ամբիոն՝ քննարկելու ամբիոնի համար հրատապ խնդիրները: Եվ միանալով նախորդ ընկերներին՝ առաջարկեց թողնել նրա թեկնածությունը փակ գաղտնի քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը փակ գաղտնի քվեարկության կարգը գիտական խորհրդի անդամներին ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և արդյունքներն ամփոփելու նպատակով:

Գիտխորհրդի անդամների կողմից առաջարկվեց երեք թեկնածու՝

1. Վալերի Խաչատրյան (նախագահ),
2. Սպարտակ Սողոյան,
3. Հայկ Հարոյան:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Խաչատրյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Կուրազյան Օֆելյա	45	2	0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. Մ.գ.թ. Օֆելյա Էդմոնի Կուրազյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում (Զեկ.՝ ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան Ս. Մարգարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Մարգարյանը, ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Մանուկյանը, գիտական գրադարանի տնօրեն Գ. Աղուզումցյանը:

Ս. Մարգարյանի կողմից բարձրացված խնդիրներից Վ. Գրիգորյանին հետաքրքրեց համակարգչային լսարաններից մեկի տեխնիկական վերազինման հարցը:

Այդ խնդրի շուրջ խոսեց նաև ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, ով հավաստեց համակարգչային լսարանի տեխնիկական վերազինման խնդիրը, որովհետև քսան համակարգչից վեցն ընդհանրապես չի աշխատում:

Ս. Ալեքսանյանյանի խոսքերով՝ ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետը, լինելով բուհի հիմնադիր ֆակուլտետներից մեկը, առանձնանում է պրոֆեսորադասախոսական

կազմի կատարած զգալի գիտահետազոտական, ուսումնական աշխատանքների ծավալով: Ըստ նրա՝ մասնավորապես արժեքավոր է բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ու ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնների գործունեությունը: Նա նաև դրական գնահատեց ֆակուլտետի փաստաթղթաշրջանառությունը: Որպես առաջարկ՝ նշեց ֆակուլտետում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ժամանակակից մասնագիտությունների ներմուծման անհրաժեշտությունը և առաջարկեց ֆակուլտետում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը անդրադարձավ ֆակուլտետի ղեկանի անձնային որակներին: Նա նշեց, որ Մ. Մարգարյանը, լինելով ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, ընթերցում է դասախոսություններ, ղեկավարում է կուրսային ու մագիստրոսական թեզեր, մասնակցում է ամբիոնի աշխատանքներին՝ միաժամանակ բարեխղճորեն կառավարելով ֆակուլտետը: Նա նույնպես առաջարկեց ֆակուլտետում կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանն առաջարկեց գիտխորհրդի անդամներին հանդես գալ այնպիսի ելույթներով, որոնք ոչ թե բնութագրում են ֆակուլտետի ղեկանի անձնային որակները, այլ ներկայացնում են ֆակուլտետում կատարված աշխատանքները: Նա մատնացույց արեց օրակարգը, որում նշված է ֆակուլտետի, այլ ոչ թե այն ղեկավարող սուբյեկտի գործունեությունը: Հետևաբար, ըստ նրա՝ հարկ է խոսել ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների նվաճումների ու խնդիրների մասին: Ա. Ֆարմանյանն իր խոսքի վերջում ևս մեկ անգամ հորդորեց

գործընկերներին խոսել խնդիրներից, ուղղել հարցեր ամբիոնների վարիչներին:

Ռեկտոր Վ. Գրիգորյանն ընդունեց, որ ցանկալի են ֆակուլտետի վերաբերյալ առարկայական ելույթները՝ ֆակուլտետին վերաբերող, նրա կառուցվածքային միավորների ձեռքբերումների ու խնդիրների շեշտադրմամբ, բայց նաև չբացառեց ղեկավարի անձի ներկայացումը: Ըստ նրա՝ ղեկավարի անձը որոշիչ է թե՛ ֆակուլտետի, թե՛ ամբիոնի կառավարման պարագայում:

Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Մարգարյանն ընդունեց Ա. Ֆարմանյանի դիտողությունը և նշեց, որ հաջորդ ուսումնական տարում կարելի է փոփոխել ելույթների բնույթը՝ հիմք ընդունելով ինստիտուտի ռազմավարությունը: Մ. Մարգարյանի որակներից նա հիշատակեց կազմակերպչական ընդունակությունները, որոնք նպաստել են ամբիոններում մասնագիտական կրթական ծրագրերի մշակմանը: Ինչ վերաբերում է ամբիոնի խնդիրներին, ապա առանձնացրեց մեկը. առաջիկայում աշխատակիցներից մեկը հայ-ռուսական համագործակցության շրջանակներում մեկնելու է Մոսկվա՝ նոր համարգչային ծրագիր յուրացնելու և այնուհետև ձեռքբերված փորձն ամբիոնի աշխատակիցներին փոխանցելու նպատակով: Այդ ուղևորության անհրաժեշտ ծախսերը հոգալու նպատակով՝ նա որոնում է հովանավոր: Ս. Մարգարյանն իր խոսքի վերջում նշեց, որ միանում է ֆակուլտետում կատարված աշխատանքները դրական գնահատելու առաջարկին:

Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Մանուկյանը հավելեց, որ ցանկալի է մագիստրատուրայում ներմուծել «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունը: Վերջինս կօգնի բարձր առաջադիմությամբ ուսանողներին շարունակելու կրթությունը ԳՊՄԻ-ում, այլ ոչ թե մեկ այլ բուհում: Ինչ վերաբերում է ֆակուլտետին, ապա նրա կարծիքով չափազանց

ղժվար է տարբեր մասնագիտությունների ուսանողների վերահսկումը մեկ ֆակուլտետում և այդ հարցում մեծ է Մ. Մարգարյանի դերակատարումը: Նա նույնպես առաջարկեց գնահատել ֆակուլտետում կատարված աշխատանքները բավարար:

Գիտական գրադարանի տնօրեն Գ. Աղուզումցյանը, շնորհակալություն հայտնելով Մ. Մարգարյանին, նշեց, որ ֆակուլտետն առաջատար դիրքում է՝ գրադարանից օգտվող ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների թվով, ինչպես նաև ընթերցասրահում առկա դասախոսությունների փաթեթների քանակով:

Ռեկտոր Վ. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Մ. Մարգարյանին՝ նշելով, որ ֆակուլտետի երկու մասնագիտության գծով հանրապետությունում առաջատար մասնագետների առկայությունը ուրախալի է: Անցում կատարելով բարձրացված խնդիրներին՝ նշեց, որ նոր համակարգիչների ձեռքբերման հարցն անպայման կքննարկվի ու կստանա լուծում: Բացի դրանից, հորդորեց տնտեսագիտության ամբիոնի վարիչ Ա. Մկրտչյանին ամբիոնում գիտական գործունեության ծավալման ուղղությամբ աշխատանքների խթանմանը: Վ. Գրիգորյանը դրական գնահատեց, որ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետից երեք ուսանող այժմ մասնակցում է ակադեմիական շարժության տարբեր ծրագրերի:

Մագիստրատուրայում «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ մասնագետների պատրաստման առաջարկը Վ. Գրիգորյանն ընդունեց, բայց միաժամանակ անդրադարձավ այդժամ «Մաթեմատիկա» մասնագիտությունը կորցնելու ռիսկին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2014-2015 ուստարում ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետում ծավալված աշխատանքները գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

2. Հաստատել՝ բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում (Ձեկ.՝ Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանը, հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ու լրագրության ամբիոնի վարիչ Գ. Խաչիկյանը, ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Բ. Սերոբյանը:

Ռ. Մարդոյանը հետաքրքրվեց, թե ֆակուլտետն ի՞նչ ծրագրեր է իրականացնում՝ ուղղված ինստիտուտի կոլեկտիվի առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ այդ ուղղությամբ առայժմ ծրագրեր իրականացված չեն, սակայն պրոֆեսորադասախոսական կազմի աշխատակիցների ֆիզիկական վիճակը բարելավելու համար՝ հանձնարարված է ձեռք բերել նոր սարքավորումներ:

Գ. Խաչիկյանին հետաքրքրում էր, թե հայրենասիրական ոգին բարձրացնելու համար ի՞նչ քայլեր են իրականացվում՝ հաշվի առնելով Արցախի հանրապետության հետ մեր հանրապետության կիսապատերազմական վիճակը:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն մասնագիտության ուսանողներն անցնում են հատուկ դասընթացներ՝ խթանող իրենց

ռազմահայրենասիրական ոգին և ստուգարքային գրքույկների հանձնման օրը նրանց տրվում են նաև երկրապահի գրքույկներ:

Ս. Ալեքսանյանի համոզմամբ՝ ֆակուլտետն իր գործառույթներով առանձնանում է: Հատկապես ֆիզիկական կուլտուրա և սպորտ մասնագիտության գծով ունեն մեծաթիվ մարզիկներ՝ մասնակցող մրցաշարերի, որոնք այդ պատճառով հաճախակի բացակայում են դասերից: Մինչդեռ նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն մասնագիտության աղջիկները պարտաճանաչ են և համեմատաբար ավելի լավ են սովորում: Ֆակուլտետում բարոյահոգեբանական մթնոլորտն առողջ է: Ֆակուլտետի դեկանը վերահսկում է ուսանողների հաճախումները: Խնդիրներից հիշատակեց ֆակուլտետում նյութատեխնիկական բազայի ընդլայնման անհրաժեշտությունը: Հաշվի առնելով բոլոր տվյալները՝ առաջարկեց ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Բ. Սերոբյանը նշեց, որ ամբիոնները փոխհամաձայնեցված են աշխատում: Ֆակուլտետում տիրում է բավականին առողջ մթնոլորտ և դեկանի հետ համատեղ կազմել են ուսումնական ծրագրեր: Նա նշեց, որ ֆակուլտետի դեկանն ունի կազմակերպչական ձիրք, աշխատելու պատրաստակամություն: Եվ նա նույնպես առաջարկեց ֆակուլտետում կատարված աշխատանքները գնահատել բավարար: Ռեկտոր Վ. Գրիգորյանը բարձրաձայնեց հետևյալ խնդիրները.

- ֆիզիկական կուլտուրա և սպորտ մասնագիտությամբ սովորողների հաճախակի բացակայությունների հարցը: Բազմաթիվ ուսանողներ, ուսումնամարզական հավաքներից մասնակցելու պատճառով բացակայում են ուսումնական պրոցեսից:
- Տարեցտարի նվազում է ֆիզիկական կուլտուրա և սպորտ մասնագիտության գծով դիմորդների թիվը, որը հավանաբար պայմանավորված է ինստիտուտի հարևանությամբ գործող

Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի առկայությամբ:

- Բուհում ջեռուցման համակարգը փոխելու խնդիրը: 2015թ.-ի հուլիսին ջեռուցման համակարգը փոխելու հարցով ինստիտուտը դիմել է ՀՀ ԿԳ նախարարություն: Շինարարական նյութեր գնելու մրցույթը կազմակերպվել է: Եվ հաջորդ տարի գարնանը լսարաններում տեղային ջեռուցման համակարգ կկիրառվի՝ նախկին ընդհանուր համակարգի փոխարեն:
- Պրոֆեսորադասախոսական կազմի առողջ ապրելակերպի վարման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը: Վաղուց հանձնարարել է ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյանին՝ նոր սարքավորումների ձեռքբերման համար աշխատանքների իրականացումը, սակայն դեռևս արդյունքը տեսանելի չէ:
- Շախմատի դասընթացի համար որակյալ մասնագետների պակասը:
- Միանալով նախորդ ելույթներին՝ Վ. Գրիգորյանն առաջարկեց մեկ տարվա կտրվածքով ֆակուլտետում կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2014-2015 ուստարում ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետում ծավալված աշխատանքները գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:
2. Հաստատել բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ՊԴ կազմի վարքագծով պայմանավորված գնահատման սանդղակի հաստատում (Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել՝ ԳՊՄԻ-ի ՊԴ կազմի վարքագծով պայմանավորված գնահատման սանդղակը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

6.1 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի անվանափոխման, կազմի փոփոխման և գործունեության կանոնակարգի քննարկում (Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ԳՊՄԻ-ի ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի համակարգող Ա. Ֆարմանյանի առաջարկով.

1. «ԳՊՄԻ-ի ռազմավարական պլանավորման հիմնահարցերի» հանձնաժողովը անվանափոխել «ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարության պլանավորման և վերահսկման» հանձնաժողովի:
2. Հանձնաժողովի կազմում կատարել մասնակի փոփոխություն, որի արդյունքում նրա անդամներ կհանդիսանան.

1. Սամվել Սարգսյան - նախագահ
2. Անահիտ Ֆարմանյան – համակարգող
3. Նազելի Ավետիսյան,
4. Ելենա Վարդանյան,
5. Հենրիկ Դրմեյան,
6. Անգին Գրիգորյան,
7. Հովհաննես Խորիկյան:

Ա. Ֆարմանյանի խոսքերով՝ բուհն ունի զարգացման ռազմավարական ծրագիրը, ֆակուլտետները ներկայացնում են մեկամյա ծրագրերը: Նա նշեց, որ ռազմավարության պլանավորումն ու իրագործումը նոր գործունեություն է: Հանձնաժողովը կորոշինացնելու է աշխատանքների իրագործումը: Շատ հարցեր

դեռևս թվում են անհասկանալի: Բոլոր ծրագրերը պետք է կառուցվեն ներքևից վերև. ամբիոնը պետք է հաշվետու լինի ֆակուլտետին, ֆակուլտետը՝ հանձնաժողովին, իսկ հանձնաժողովը՝ գիտխորհրդին: Ընդ որում, հանձնաժողովի գործունեության հաշվետվությունները պարբերաբար ներակայացվելու են գիտխորհրդի նիստերին:

Նա նաև նշեց, որ բուհում հարկավոր է ձևավորել որակի մշակույթ: Անգամ կառուցվածքային ստորաբաժանումների ելույթների ժամանակ հաճախ հակադիր կարծիքներ են արտահայտվում: Համապատասխանաբար, յուրաքանչյուր խոսք պետք է հենվի բացառապես փաստերի վրա: Աստիճանաբար և՛ ուսանողները, և՛ դասախոսները կզգան որակի բարձրացումը, բայց դեռևս անելիքները շատ են:

Ա. Ֆարմանյանը նաև ներկայացրեց կանոնակարգի հիմնական կետերը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «ԳՊՄԻ-ի ռազմավարական պլանավորման հիմնահարցերի» հանձնաժողովը անվանափոխել «ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարության պլանավորման և վերահսկման» հանձնաժողովի:

2. Հանձնաժողովի կազմում կատարել մասնակի փոփոխություն, որի արդյունքում այն կանդամակցեն.

1. Սամվել Սարգսյանը – նախագահ,
2. Անահիտ Ֆարմանյանը - համակարգող
3. Նազելի Ավետիսյանը,
4. Ելենա Վարդանյանը,
5. Հենրիկ Դրմեյանը,
6. Անգին Գրիգորյանը,
7. Հովհաննես Խորիկյանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.2 ԼՍԵՑԻՆ.- Ակադեմիական փոխանակման ծրագրերով առնվազն մեկ ամիս ժամկետով տեղաշարժվելու դեպքում ԳՊՄԻ-ի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների

անդամակցումը կառավարման մարմիններում, հանձնաժողովներում դադարեցնելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով վերջին տարիներին փոխանակման ծրագրերին ԳՊՄԻ-ի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների մասնակցության ակտիվացումը՝ առնվազն մեկ ամիս ժամկետով ակադեմիական փոխանակման ծրագրերով տեղաշարժվելու դեպքում դադարեցնել նրանց անդամակցումը ինստիտուտի կառավարման մարմիններում, հանձնաժողովներում մինչ ծրագրերի ավարտն ու վերադարձը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.3 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի խորհրդին անդամակցելու համար ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուների ընտրության հարցը (Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը, պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ե. Վարդանյանը՝ առաջարկելով խորհրդի անդամության թեկնածուների:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի խորհրդին անդամակցելու համար ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուներից ընտրվեցին՝

1. Արտաշես Անդրանիկի Մկոյան – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Նաշիկ Պողոսի Հարությունյան – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Կարինե Մկրտիչի Սահակյան – տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,

4. Մարիետա Կոլյայի Խաչատրյան – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
5. Օվսաննա Սուրենի Աբգարյան – դասախոս,
6. Արտուշ Գևորգի Խաչատրյան – դոցենտ

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.4 ԼՍԵՑԻՆ.– Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, Բ.գ.թ., դոցենտ Հրանուշ Սուրենի Զաքյանի «Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարածամանակյա քննություն» խորագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

Ա. Ֆարմանյանը նշեց, որ այժմ ցանկացած գիտական աշխատանք ուղարկվում է արտաքին գրախոսման: Առայժմ նա միայնակ է ներկայացնում գիտական աշխատանքների վերաբերյալ ստացված արտաքին կարծիքները, բայց առաջիկայում կստեղծվի մեթոդական հանձնաժողով՝ պատասխանատու բոլոր փաստաթղթերի համար:

Ա. Ֆարմանյանի ներկայացմամբ՝ «Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարածամանակյա քննություն» խորագրով մենագրությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնում և մեջբերեց կարծիքի վերջին պարբերությունը.

«Աշխատանքը գրված է գիտական պատշաճ ոգով, ընդգրկում է հայերենի գրեթե ողջ բայական համակարգը և ընթերցողին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու բայերի իմաստափոխության գործընթացը՝ բացահայտելով ինչպես կրկնասեռության դրսևորման, այնպես էլ սեռային տեղաշարժերի գործոններն ու պատճառները:»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Բ.գ.դ., դոցենտ Ս. Հայրապետյանը, Բ.գ.թ., դոցենտ Մ. Խաչատրյանը:

Բ.գ.դ., դոցենտ Ս. Հայրապետյանը նշեց, որ ծանոթ է աշխատանքին: Նա մասնակցություն ունեցել է աշխատանքի առանձին հատվածների տպագրման գործում: Աշխատանքի թեման շատ լավն է, որով դեռևս

ոչ ոք լուրջ չի գրադվել: Եվ առաջարկեց աշխատանքն անպայման հրատարակել:

Բ.գ.թ, դոցենտ Մ. Խաչատրյանն աշխատանքի բովանակությանը ծանոթ էր: Նա նշեց, որ ամբիոնում կազմակերպված քննարկման արդյունքում աշխատանքը երաշխավորվել է հրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., դոցենտ Հրանուշ Սուրենի Զաքյանի «Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարածմանակյա քննություն» խորագրով մենագրությունը երաշխավորել հրատարակության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Թ. ԽԱԶԱՏՐՅԱՆ